# ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԱԾ-18/20

01.04.2020թ.

ք.Գավառ

«Գավառի ԲԿ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Կարապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), միկողմից, և ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՄՊԸ, իդեմս տնօրեն Գ. Դավթյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աուդիտորական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ նպահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

Сканировано с CamScanner

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 895 000 (ութ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրությունը երկուստեք ստորագրելուց հետո՝ 2 բանկային օրվա ընթացքում:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

Сканировано с CamScanner

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ԴԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1)Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

Сканировано с CamScanner

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամմինչև 30 օրացուցայինօրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետությանիրավունքը:

## 8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ | ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ |
| ք.Գավառ, Ազատության 21 | ք.Երևան, Վարդանանց 18/1, գր.54 |
| <<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ | ՀՎՀՀ 00419022 |
| Գեղարքունիքի մ/ճ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 220085140329000, ՀՎՀՀ 08417304 | ՀՀ 1570002914170100 |
| Էլ.փոստ: gayaribk@mail.ru | |
| Տնօրեն Ա. Վարդանյան | |
| ------------------ | ------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Сканировано с CamScanner

Հավելված N 1
01.04.2020թ. կնքված
N ԱԾ-18/20 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՉՀ | Ծառայության անվանումը | տեխնիկականբնութագիրը* | չափման միավորը | Ընդհանուր գինը/ ՀՀդրամ | Ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | հասցեն | ենթակաքանակը | ժամկետը |
| 1 | Աուդիտորական ծառայություններ | <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ում աուդիտորական ծառայությունների մատուցման<br>1.Ընդհանուր դրույթներ<br>1.1 <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ ում (այսուհետ Ընկերություն) տարեկան 2019թ. պարտադիր աուդիտորական ծառայությունների մատուցման սույն տեխնիկական բնութագիրը մշակվել է համաձայն 12.03 2003թ. թիվ ՀՕ-512-Ն <<Աուդիտորական գործունեության մասին>> ՀՀ օրենքի դրույթների հիման վրա և ենթադրում է << ՀՀ պետական կառավարչական հիմնարկների մասին >> <<Գանձապետական համակարգի մասին>>, << ՀՀ բյուջետային համակարգի մասին>> և այլ օրենքների , ինչպես նաև ՀՀբ կառավարության համապատասխան որոշումների պահանջների կլատարման վերլուծություն՝ իրականացվելիք աուդիտորական գործառույթներում :<br>1.2Աուդիտի անցկացման նպատակը Ընկերությունում 2019թ. ֆինանսական գործունեության աուդիտն է<br>1.3 Աուդիտի առարկան է հաշվապահական հաշվառումը<br>2.Աուդիտի խնդիրները<br>- Առ 31.12.2019թ. դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված մնացորդների ուսումնասիրություն և վերլուծություն:<br>-Սկզբնական հաշվառման և ծախսային փաստաթղթերի , աշխատանքների , ծառայությունների մատուցման, ձեռք բերումների գծով պայմանագրերի և համաձայնագրերի կազմման, հաշվապահական և վերլուծական իշվառմանտվյալների գրանցման համապատասխանության ստուգում::<br>-Ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ) և ընթացիկ ակտիվների հաշվառման ուսումնասիրում:<br>-Ապրանքանյութական արժեքների հաշվառման ճշտության, հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռք բերման , օտարման, լուծարման , սկզբնական հաշվառման փաստաթղթերի կազմման և քարտերի հաշվառման ճշտության ստուգում:<br>-Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների մաշվածության հաշվարկների ճշտության ստուգում , ապրանքանյութական արժեքների ձեռք բերումների, ելքագրումների, դրանց ծախսագրման հաշվառման ճշտությանը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին:<br>-Բանկային և դրամարկղային գործառնությունների ստուգում:<br>-Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների , բյուջեի և այլ կրեդիտորների հետ փոխհարաբերությունների ստուգում:<br>- Առկա դեբիտորական, կրեդիտորական պարտքերի մեջ անհուսալի և ժամկետանց պարտքերի վերլուծություն և ստուգում:<br>-Ակտիվների և պարտավորությունների գույքագրման | դրամ | | 1 | Ք.Գավառ Ազատության 21 | 1 | 15.09.2019 թ. |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | [illegible] ստուգում: -Առ 31.12.2019թ. դրությամբ [illegible] և պարտավորությունների ինչ առկա [illegible] հաշվետվությունների ստուգման [illegible] ուսումնասիրում: -Կադրերի և աշխատողների վարձատրության [illegible] աշխատակիցների հետ կնքված պայմանագրերի աշխատողի ընդունման, տեղափոխման, ազատման հրամանների, աշխատակիցների պայմանագրերի առկայության ստուգում, դրանց կազմման և ձևակերպման ճշտության ուսումնասիրում: -Աշխատողի վարձատրության [illegible] ստուգում: -Ծախսերի հաշվառման և արտահաշվեկշռային հաշիվների (եթե առկա է) շրջանառության ճշգրտության, ֆինանսական արդյունքների ստուգում: -Վերոնշյալ ուսումնասիրությունների հիման վրա առկա հաշվապահական հաշվառման գծով թերությունների և բացթողումների, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և հարկային օրենսդրության հետ անհամապատասխանությունների ներկայացում: Աուդիտորական եզրակացության պատրաստում և վերջնական արդյունքների ներկայացում վերոհիշյալ աշխատանքների արդյունքում բացահայտված բացթողումների և թերությունների գծով | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | |

ԳՆՈՐԴ

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ

ք.Գավառ, Ազատության 21

<<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ

Գեղարքունիք մ/ճ

ՀՀ 2200851403 [illegible] 000, ՀՎՀՀ 08417304

Էլ.փոստ. gavanbk@mail.ru

Տնօրեն Ա. [illegible]

/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

ք.Երևան, Վարդանանց 18/1, գր.54

ՀՎՀՀ 00419022

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՀ 1570002914170100

/ստորագրություն/

Կ.Տ.

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ»

"PKF AUDIT SERVICE"

00419022

Сканировано с CamScanner

Հավելված 2
01.04.2020թ. կնքված
N ԱԾ-18/20 ծածկագրով պայմանագրի

ԳՆՈՐԴ
<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ
ք.Գավառ, Ազատության 21
<<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Գեղարքունիք մ/ճ
Հ/Հ 220085140329000, ՀՎՀՀ 08417304
Էլ.փոստ:gavaribk@mail.ru

ՎԱՃԱՌՈՂ
ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 18/1, գր.54
ՀՎՀՀ 00419022
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570002914170100

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

19.05.2020թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 01.04.2020թ.
Պայմանագրի համարը՝ ԱԾ-18/20
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ 19.05.2020թ. դուրս գրված N Ա1790123316 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Աուդիտորական ծառայություններ | <<Գավառի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի 2019թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ | 31.12.2019թ. դրությամբ | 31.12.2019թ. դրությամբ | 15.09.2020թ. | 19.05.2020թ. | 895.0 | ըստ վճարման ժամանակացույցի |

Ծառայությունը հանձնեց
______________
ստորագրություն
______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________
ստորագրություն
______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Сканировано с CamScanner